Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող
գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item	ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՅՆԹԱՓ 17 Փ. 36 Տ.

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter
- ☒ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO110901737AM

- ☒ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature 26/08

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ծանուցագիր
Հավելյալ Նշում 2՝ Ա.Պարսեղյան

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԻ Փ. 87ա
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է ստացողի կողմից/To be filled in by the receiver

ALO110901737AM

6 AUG 2023 0803

powered by Envelope, envelope.haypost.am

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԻ Փ. 87ա
որոշում 872-Ա
Ա.Պարսեղյան

ARMENIA YEREVAN 0078 21 OCT 2023 ՀԱՅՓՈՍՏ HAYPOST

ՀԱՅՓՈՍՏ	Հասույթը գանձված է Tax percue	HAYPOST

LO111785801AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ CN15
RETURN

- ☐ Անհայտ/ Unknown
- ☐ Մերժված / Refused
- ☐ Տեղափոխված/ Gone away
- ☒ Չի պահանջվել/ Unclaimed
- ☐ Թերի հասցե/ Insufficient address
- ☐

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Armenia ԱՐԱՐԱՏ ԱՅՆԹԱՊ 17փ. 36տ.

powered by Envelope, envelope.haypost.am

ALO111785801AM

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ որոշում 872-Ա
Հավելյալ Նշում 2՝ Ա.Պարսեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա «18» սեպտեմբեր 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 872-Վ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԿԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 7418/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԿԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ (Հասցե Արարատ Այնթափ 17փ. 36 տ. ՀՎՀՀ 47862884 ՀԾՀ 3510950488) չկատարված հարկային պարտավորությունը 10.03.2021թ-ի դրությամբ կազմում է 22536 դրամ, այդ թվում հարկ՝ 19950 դրամ, տույժ՝ 2586 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 21.08.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է:

28.08.2023թ. ֆիզիկական անձ Վարդան Վարդկեսի Գրիգորյանը ներկայացել և ծանոթացել է վարույթի նյութերին, ներկայացրել է գրավոր առարկություն (կցվում վարույթին) առ այն, որ իր կողմից կատարվել է նվիրատվության գործարք՝ 17.09.2019թ-ին ձեռք բերված TOYOTA COROLLA 1.8 մակնիշի 2014թ-ի արտադրության ավտոմեքենան 18.12.2019թ-ին նվերել է հարազատ քրոջը, հետևաբար գտնում է, որ մեքենայի օտարումից որևէ եկամուտ չի ստացել և չէր կարող ունենալ հարկային պարտավորություն:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ 18.12.2019թ. օտարվել է 17.09.2019 թվականին ձեռք բերված TOYOTA COROLLA 1.8 մոդելի 2014 թվականի արտադրության 133 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 0 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150–րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից:

Ֆիզիկական անձ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԿԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ կողմից ավտոմեքենայի օտարումից եկամտային հարկը չի հաշվարկվել ինքնուրույնաբար և բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին չի ներկայացվել 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում 10.03.2021թ-ի դրությամբ կազմում է 22536 դրամ, այդ թվում հարկ՝ 19950 դրամ, տույժ՝ 2586 դրամ, որն առաջացել է 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը

չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.ֆիզիկական անձ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԿԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՑ գանձել **22536** դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

10.03.2021թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7= 4+5+6**	**8**	**9**
1	Եկամտային հարկ	20.04.2020թ	19950	2586	-	**22536**	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը ______________ ______________ ______________
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ պաշտոնատար անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

<u>Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:</u>

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ Արեգա Պարսեղյան, հեռ. 010-30-91-91 /91-36/:

(055) 47-00-87

ք. Երևան, Ս.Դավթի 87

«21» օգոստոս 2023թ.

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հասցե՝ ԱՐԱՐԱՏ ԱՅՆԹԱՓ 17 Փ. 36 Տ.
ՀՎՀՀ՝ 47862884, ՀԾՀ՝ 3510950488

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Սույն Ծանուցագրով Դուք ծանուցվում եք, որ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով կազմված «Հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող» թիվ 7418/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության համաձայն Ձեր չկատարված պարտավորության գումարը կազմում է 22536 դրամ, այդ թվում հարկ՝ 19950 դրամ, տույժ՝ 2586 դրամ:

Համաձայն թիվ 7418/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների՝ Ձեր կողմից 18.12.2019 թվականին օտարվել է 17.09.2019 թվականին ձեռք բերված TOYOTA COKOLLA 1.8 մոդելի 2014 թվականի 133 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 0 ՀՀ դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ուստի, ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցագիրը ստանալու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11:00 ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և «կամ» առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա, 4-րդ հարկ 415 սենյակ:

Եթե սույն ծանուցագիրը ստանալու օրվան հաջորդող 3-րդ օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վարչական վարույթի լսումներին ներկայանալ հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ժամը 11:00 կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և «կամ» առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա, 4-րդ հարկ 415 սենյակ: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Միաժամանակ առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկել և հարկային մարմին ներկայացնել թիվ 7418/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրությունում նշված գործարքին վերաբերող հարկային հաշվարկը և վճարել պարտավորությունները:

Ձեր արդար

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԵՌԱԽՈՍ՝ 010-30-91-91
ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱՐ՝ 91-36

Արեգա Պարսեղյան

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ
2019թ. հուլիսի 18-ի թիվ 481-Լ հրաման

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7418/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան **10/03/2021**

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԿԵՍԻ ՀՎՀՀ 47862884
(հարկային իրավախախտում կատարած անձի անունը, ազգանունը, կազմակերպության լրիվ անվանումը, ՀՎՀՀ (առկայության դեպքում)

2.ԱՐԱՐԱՏ,ԱՅՆԹԱՊ,17 Փ.,36,Տ
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. 3510950488
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և /կամ/ ՀԾՀ (հայտնի լինելու դեպքում))

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցվ իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից.

1) 18/12/2019 թվականին օտարվել է 17/09/2019 թվականին ձեռք բերված TOYOTA COROLLA 1.8 մոդելի 2014 թվականի արտադրությ 133 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 0 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հա վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձա համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147- հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (**բացառությա ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի**) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսաց ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, ել ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանվ դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մաս եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկ համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտվ լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից: Ընդ որում, ֆիզիկական անձը ավտոմեքենա օտարումից եկամտային հարկը պետք է հաշվարկեր ինքնուրույնաբար՝ մինչև 2020 թվականի ապրիլի 20-ը ներառյալ, բացառապ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ (ձ հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածով):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձի կողմից վերը նշված հարկվող գործարք(ներ)ի մասով, հարկայ մարմին չի ներկայացվել 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել արդյունք առաջացող հարկային պարտավորությունը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձի կողմից 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ չներկայացնե պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եկամտային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվ պայմանագրային արժեքի 1 տոկոսի և ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի ձիաուժ հզորության 15 ապատիկի առավելագույն արժեքը, որը կազմում է՝ 19950 դրամ:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվ համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով, որը կազմում է՝ 2586 դրամ (10/03/2021 թվականի դրությամ [19950x0,04%x324]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 10/03/2021 թվականի դրությամբ կազմ է 22536 դրամ, որից հարկ՝ 19950 դրամ, տույժ՝ 2586 դրամ:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 10/03/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուց նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

7.Ընդամենը՝ ___-___ թերթ

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ Շահանե Կարապետյան